ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
Պատմական գիտությունների թեկնածու,
պրոֆեսորի պաշտոնակատար
ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոն
avharutunyan@mail.ru
DOI: 10.54503/1829-4073-2022.2.39-61

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ շարժընթաց, կամավորական շարժում, Վան, Ջևդեթ, Արամ, Ա. Վռամյան, կոտորածներ:

Ներածություն

Գտնվելով ռուս-թուրքական և թուրք-պարսկական սահմանագլխի հյուսիս-արևելյան անկյունում և հանդիսանալով ամենահայաշատ կուսակալությունն Օսմանյան Թուրքիայում[1], Վանի նահանգի հայությունն, արդարև, կարող էր քաղաքական և ռազմական ծանր կնճռոտություններ պատճառել թուրքերին՝ դեպի Վան շարժվող ռուսական բանակի ռազմական գործողություններին հայ կամավորական ջոկատների մասնակցությամբ: Այդ էր պատճառը, որ Վասպուրականի հայության տեղահանությունները և կոտորածները մեծ թափ ստացան հատկապես Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները սկսելու հետ մեկտեղ, երբ թուրքական ռազմական ուժերն անցան հարձակման: Չէ՞ որ Կովկասյան ճակատը հանդիսանում էր «ճանապարհ դեպի Թուրան»[2], իսկ մյուս ռազմաճակատները գեներալ Ք. Կարաբեքիրի հավաստմամբ, ունեին երկրորդական նշանակություն[3]:

---

* *Հոդվածը ներկայացվել է 27.12.21, գրախոսվել է 27.12.21, ընդունվել է տպագրության 22.08.22:*

[1] Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1914 թ. մարդահամարի տվյալների, Վանի կուսակալության մեջ ապրում էր ավելի քան 200.000 հայ: Տե՛ս **Պալաքեան ծ. վարդ.** 1922, 60: Ըստ մեկ այլ վիճակագրության՝ նահանգի 542.000 բնակչությունից 192.000-ը հայեր էին: Տե՛ս **Ակնունի** 1920, 34:

[2] **Гасанова** 1966, 144.

[3] Տե՛ս **Karabekir** 1995, 29:

Ռուսական զորքերի շարժընթացը Վանի նահանգի արևելյան սահմանների ուղղությամբ և դրա անդրադարձումները

Դեպքերն արագ և սպառնալից բնույթ ձեռք բերեցին հատկապես 1914 թ. նոյեմբերի երկրորդ կեսին, երբ ռուսական զորամիավորումները, որոնք դեռևս 1914 թ. նոյեմբերի 20-ին Ջուլֆայի մոտից անցել էին ռուս-իրանական սահմանը, առաջապահ հայ կամավորների հետ միասին Բասեն-Ալաշկերտ և Բայազետ-Դիադին ուղղություններով, ընդամենը մեկ ամսվա ընթացքում գրավեցին Խոյի, Ուրմիայի, Սոուջբուլաղի, Թավրիզի շրջանները[4], Իդը, Քեոփրի-Քեոյը, Ալաշկերտը, Դութաղը, Թափարիզը, իսկ նոյեմբերի 19-ին՝ գեներալ Չերնոզուբովի հրամանատարությամբ, նաև Հեքեարի կենտրոն Բաշկալեն և Սարայ գյուղաքաղաքը[5]: Միաժամանակ, Անդրանիկի կամավորական առաջին ջոկատը հասավ մինչև Արճակի Մոլլա-Հասան գյուղ:

Ռուսական բանակի առաջխաղացումը Վանի նահանգի արևելյան սահմանների ուղղությամբ, ինչպես նաև ռուսական թնդանոթների որոտը Արճակ գավառի սահմաններում և Մոլլա-Հասանի շրջակայքում ավելի ու ավելի հրահրեց ազգային ու կրոնական ատելությունը հայերի հանդեպ և ողբերգական անդրադարձումներ ունեցավ հայկական անպաշտպան գյուղերի վրա, որոնք ենթարկվեցին կողոպուտի ու կոտորածի: Բանն այն էր, որ Բաշկալեն Վանից հեռու էր 80, Սարայը՝ 50, իսկ Մոլլա-Հասանն ընդամենը՝ 30 կմ:

Ռուսական բանակի առաջխաղացումը մեծ ոգևորություն առաջ բերեց հատկապես վասպուրականցիների շրջանում, բարձրացրեց նրանց տրամադրությունը՝ հակակշիռ ստեղծելով այն բռնություններին, որ հրապարակ էր բերել թուրքական կառավարությունը վերջին ամիսների ընթացքում: Վասպուրականի երիտասարդությունը պատեհ էր համարում այդ պահը, քանի որ «դարերի ընթացքում հազիւ էր ներկայացել յարմարագոյն առիթը փոխ-վրէժի կուտակուած կատաղութիւնը թափելու դարաւոր թշնամու գլխին»[6]: Ա-Դոն նկատում է, որ վանեցիներին համակած ուրախությունը «կայծակի արագութեամբ թռչում է գիւղից գիւղ, գաւառից գաւառ և բերանից բերան: Պէտք է

[4] Տե՛ս Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին եվ պատերազմի տարիներին 1984, 23–24:

[5] **Корсун** 1940, 42.

[6] Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915–1930 1930, 21:

ապրած լինել տաճկահայի դրութիւնը, պէտք է մարդ փորձած լինի իր կաշու վրա այն բոլոր զրկանքները, որի մէջ ապրել է տաճկահայը տարիներով»[7]:

Մյուս կողմից, ահ ու սարսափ է տարածվում թուրքերի և քրդերի շրջանում: Առաջին անգամ լինելով՝ Վանի թուրքական կառավարությունը և «երէկուան սոնքացող «կտրիճները»[8] խուճապի մատնվեցին: Ա. Դարբինյանը նկատում է, որ ռուսական զորքերի և հայ կամավորականների շարժընթացի արդյունքում Վանում թուրքերը խուճապի մատնվեցին, իսկ «հայերուն խանդավառութիւնը իր գագաթնակէտին կը հասնէր, լեղապատառ թուրքերն ալ խուճապի մատնուած՝ սկսան փախչելու պատրաստութիւն տեսնել, ոմանք նոյնիսկ ճամբայ ելան»[9]:

Մեծահարուստ թուրքերը վաճառում էին իրենց ունեցվածքը, իսկ թուրք ժողովուրդը, վերահաս վտանգի առջև սահմռկած, «կուչ էր եկել կրիայի նման իր պատեանի մէջ»[10]: Եվ քանի որ վախենում էին հայերի վրեժխնդրությունից, նրանք Ավանցից նավ նստեցին և փախան քաղաքից, իսկ իշխանությունները նոյեմբերի 24-ին Բիթլիս տեղափոխեցին Վանի պետական արխիվը, պարենային պահուստները, գյուղատնտեսական բանկի դրամարկղը և այլ հաստատություններ[11]: Այդ մասին Հայկ Կոսոյանը հիշում է. «Առաջին անգամն էր, որ ականատես կը'լլայինք թուրքական տագնապին: Յուսահատ լքում, Մոսկովի սարսափը ամէնքի մէջ ամէնուրեք»[12]:

Միաժամանակ, ինչպես Բիթլիսի և Էրզրումի, այնպես էլ Վանի նահանգի մահմեդական ազգաբնակչության այն մասը, որը հակառակ էր սկսված պատերազմին, տարերայնորեն նախազգում էր իր պետության քայքայումը և կասկածից վեր էր համարում Ռուսաստանի հաջողությունը պատերազմում, ապաստանում էր հայերի տներում և դիմում նրանց հետևյալ առաջարկությամբ. «Մենք կը պաշտպանենք ձեզ, եթէ կառավարութեան կողմից բռնութիւն լինի, դուք էլ պաշտպանէք մեզ, եթէ ռուսները մեր երկիրը մտնեն»[13]:

Հատկանշական է, որ թուրք մեծահարուստների կանայք իրենց ընտանիքների պաշտպանության ակնկալիքով դիմում են նաև Վանի եվրոպացի

---

[7] **Ա-Դօ** 1917, 126:

[8] Յուշեր Արմենակ Եկարեանի 1947, 182:

[9] **Դարբինեան** 1947, 156:

[10] Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915–1930 1930, 21:

[11] Տե՛ս Оборона Вана. 7 апреля – 4 мая 1915 г. 1917, 15.

[12] **Կոսոյեան** 1992, 18:

[13] **Կոսոյեան** 1992, 82:

միսիոներուհիներին՝ հայտնելով, թե «մենք այնքան ռուսներէն չենք վախնար, որքան քիւրտերէն, որոնք անցել էին ռուսների կողմը»[14]:

Վանի քաղաքապետարանի թուրք պաշտոնյաներից մեկը նույնիսկ խոստովանում էր, որ. «այս պատերազմը մեր վզին փաթաթեցին... մի երկրի ժողովուրդ ենք, ինչ ունենք իրար հետ, որ իրար թշնամի դառնանք»[15]: Իսկ Այգեստանի հայ ոստիկան Արմենակ Շատախցյանը հիշում է, որ «նոյեմբերի 19-ի առաւօտեան, սովորականի պէս, ես քաղաք իջայ և ուղիղ դիմեցի ոստիկանատուն: Երբ ես ներս մտայ ոստիկանատան ընդհանուր սենեակը, զարմացած նկատեցի, որ այդտեղ եղող ոստիկանական պաշտօնեաները գոյները նետած, ինչ որ անհանգիստ վիճակի մէջ են: - Քեզ ոստիկանապետը (փօլիս միւդիրին) հարցնում է,- ասացին պաշտօնեաները, երբ ինձ տեսան, և ես անցայ միւս սենեակ, ուր ոստիկանապետն էր լինում: Այս տեղ երկու հոգի էին, մէկը ոստիկանապետն ինքն էր – Վեֆիք բէյը-Սալօնիկցի, իսկ միւսը ժանդարմիայի կօմանդար – Բուրհանէդդին բէյը, ինչ-որ անհանգիստ խոսակցութեամբ բռնուած: Դրանք նոյնպէս գունատ էին, ու այնպէս սարսափած, որ խօսել չէին կարողանում: Երբ ես ներս մտայ, նրանք խօսակցութիւնը ընդհատեցին և ոստիկանապետը դառնալով ինձ, ասաց.- Գիտես, զաւակս, պատերազմը որ կայ՝ թղթախաղի կը նմանի, երբեմն մէկին կը զարնէ, երբեմն միւսին: Այսօր թշնամուն յաջողւեր է մեր սահմանը ոտ դնել, այդ պատճառով մենք պարտաւորուած քաղաքը պիտի թողնենք: Գիտենք, որ ռուսները ձեզի բարեկամ են և ձեզի ոչինչ չը պիտի անեն, ուստի պաշտօնատունս քեզի պիտի յանձնեմ, կը նայես որ ոստիկանատունը չը կողոպտուի: Ասում էր այս խօսքերը ոստիկանապետը սարսափած, հազիւ շրթունքները շարժելով»[16]:

Նշենք, որ հայերը շատ լավ վերաբերմունք են ցույց տալիս և հանգստացնում թուրք բնակչությանը՝ երաշխավորելով, որ նրանք չհեռանան[17]: Այս հարցում հատուկ ջերմեռանդություն է հանդես բերում Ա. Վռամյանը: Նա թուրք ազգաբնակչությանը համոզում էր հանգիստ սպասել իրադարձությունների հետագա զարգացմանը և հավաստիացնում էր, որ, եթե նույնիսկ ռուսները գրավեին Վանը, ապա բնակչությունը չպետք է անհանգստանա բռնություններից, քանի որ ռուս զինվորը երբեք չէր նեղացնի խաղաղ բնակչությանը: Ա. Վռամյանը նաև հավատացնում էր, որ ինչ վերաբերում է հայերին, ապա

---

[14] **Պրայս** 1920, 105:

[15] **Սոլախյան** 2000, 10:

[16] **Ա-Դօ** 1917, 128:

[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 11:

նրանք, ճիշտ է, դժգոհ էին կառավարությունից, բայց ժողովրդի նկատմամբ չունեին ատելության զգացողություն[18]: Հայ պատգամավորի միջամտությունը որոշակի ազդեցություն թողեց և թուրքերից շատերին հետ պահեց փախուստի մտքից: Այդ ժամանակ Վանում կար ընդամենը 400 թուրք ոստիկան-զինվոր, և հայերի համար շատ դյուրին էր քաղաքը գրավելը, եթե ունենային ապստամբելու որևէ դիտավորություն: Այդ մասին Ա. Եկարյանը հիշում է. «մերիններ շատ լաւ վերաբերում ունեցան թուրքերու հանդէպ... այդ օրերուն թրքական ուժ չկար Վանի մէջ և մերիններ կրնային ամէն բան ընել անարգել: Կային միայն քանի մը հարիւր ոստիկան զորքեր: Իրաւ է թէ Հայերս ալ կազմակերպւած ուժ մը չունէինք, բայց կրնայինք ստեղծել, կային հարկ եղած տարբեր կուսակցական խումբերը: Մեր վրայ պարտականութիւն կը ծանրանար զգոյշ կենալ: Եթէ քաղաքի մէջ և մերձակայքը, մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գիւղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանութեան ամէն միջոցէ, կղզիացած շատ տեղ, քրտական ծովու մէջ»[19]:

Իշխանությանը ծանոթ էր այդ իրողությունը, որի համար էլ հայերի հետ «շողոքորթութեամբ կը վարուէր»[20]: Սակայն պատմության փորձն ու հեռատեսությունը ուրիշ թելադրանքներ ունեին: Չէր կարելի վստահել բախտի ժամանակավոր հաջողությանը: Պատերազմական փոփոխակի գործողությունները կարող էին տխուր անակնկալներ առաջ բերել, իսկ արկածախնդիր մի շարժում և ապստամբության հրահրումը կարող էր կորստաբեր հետևանքներ ունենալ ողջ արևմտահայության համար: Սակայն բանն այն է, որ Վանում տարիներ շարունակ գործունեություն ծավալած և առաջին հայացքից իրենցից կազմակերպված ուժ ներկայացնող հայ քաղաքական կուսակցությունները, մասնավորապես՝ դաշնակցության տեղական կազմակերպությունները ապստամբություն բարձրացնելու, թուրքական բանակին թիկունքից հարվածելու գործնական և ոչ մի մտադրություն չունեին: Ա. Վռամյանը և կուսակցական մյուս գործիչները քարոզում էին շրջահայաց և զգույշ լինել: Երիտասարդությունն էլ, հավատարիմ իրեն տրված խորհրդին, «զսպեց իր ներքին հրճւանքին և ոչ մի հակապետական արարք կամ արտայայտութիւն չունե-

[18] Տե՛ս Оборона Вана. 7 апреля – 4 мая 1915 г. 1917, 15.
[19] Յուշեր Արմենակ Եկարեանի 1947, 182:
[20] **Պրայս** 1920, 106:

ցաւ»[21]: Շրջահայաց քաղաքականությունը և ժամանակ շահելու հեռատեսությունը թույլ չտվեց բարդություններ առաջացնել: Չնայած բոլոր դժվարություններին, հայերը կատարում են իրենց քաղաքացիական պարտքը և փորձում են գոնե ժամանակավորապես խուսափել անախորժություններից ու աղետներից:

Ստեղծված սպառնալիքից խուսափելու համար Թ.Ջևդեթը, որն իր մի քանի հարյուր ոստիկանների և Վանի իթթիհատի ներկայացուցիչ, Օսմանյան կայսրության արևելյան սահմանների ընդհանուր կոմիսար և զորքերի հրահանգիչ Նաջի բեյի հետ մեկնել էր Բաշկալե, Արամին և Ա.Վռամյանին առաջարկեց բանակցություններ սկսել ռուսական զորահրամանատարության՝ մասնավորապես գեներալ Ֆ.Չեռնոզուբովի և կամավորական առաջին ջոկատի հրամանատար Անդրանիկի հետ ու նրանց հետ կանգնեցնել Վանի ուղղությամբ ռազմական գործողություններ իրագործելու մտահղացումից: Արամին և Ա.Վռամյանին հասցեագրած իր հեռագրում Ջևդեթը կտրականապես պահանջում էր. «Անհապաղ ձի նստեք և հապճեպ եկեք Սարայ. ես ձեզ կտամ հնարավորություն մեկնել Պարսկաստան ձեր ընկերների հետ հանդիպելու համար: Համոզեք նրանց ցրեն ջոկատները, հակառակ դեպքում հայերին սպասվում է ամենածանր պատիժը»[22]: Մեկ անգամ ևս փորձ կատարվեց օգտագործելու դաշնակցության Վանի կոմիտեն՝ հայ կամավորների շարժընթացը կասեցնելու համար:

Մինչ այդ, Վանի կոմիտեն երկու անգամ գաղտնի հեռագրով դիմել էր դաշնակցության Սալմաստի կոմիտեին և Անդրանիկին՝ նախազգուշացնելով, որ ռազմական գործողությունների հետագա անզգույշ քայլերը կարող էին կորստաբեր հետևանքներ ունենալ Վանի հայության համար: Նրանք մատնացույց էին անում կարևոր իրողությունը՝ եթե ռուսական բանակը և հայ կամավորական ջոկատները չունեին անհրաժեշտ քանակությամբ ուժ և միջոցներ Վանը գրավելու և այնտեղ հաստատվելու համար, թող չտեղաշարժվեին, քանի որ հետադարձ նահանջը կարող էր պատճառ դառնալ Վանի հայության կոտորածներին:

Սակայն թուրքերը ձերբակալում են Սալմաստի կոմիտեի պատասխան նամակը բերող քուրդ լրաբերին: Նաջի բեյը, որն այդ ժամանակ գտնվում էր Բաշկալեի մոտ՝ Բադիրխանում, շտապեց այդ մասին հեռագիր տալ

[21] Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915–1930 1930, 21:

[22] Оборона Вана. 7 апреля – 4 мая 1915 г. 1917, 15.

Ա. Վռամյանին հետևյալ բովանդակությամբ. «Ձեր լրաբեր Փախկի-Օսմանը ձերբակալված է և գտնվում է մեր ձեռքում: Նրա օձիքում մենք գտանք Ձեզ հասցեագրված կարված նամակ: Սալմաստի Ձեր ընկերները գրում են, որ նրանք գալիս են, և որ դուք պատրաստվեք նրանց դիմավորել... Եվ այսպես, դուք գտնվում եք ռուսական զորքերի հետ հարաբերության մեջ: Շնորհավորում եմ Բակունինի, Մարքսի և Կրապոտկինի աշակերտներին իրենց նոր՝ պրովոկատորի դերում: Շնորհավորում եմ հեղափոխական Իշխանին, որին ռուսական բռնատիրությունն ուղարկում է իր ողջույնների համար: Այս նամակը կհրապարակվի ի գիտություն ողջ մահմեդական աշխարհի: Բայց մինչ այդ և վերջին անգամ, առաջարկում եմ Ձեզ զսպել Ձեր ընկերներին մեր նկատմամբ թշնամական գործողություններից: Հակառակ դեպքում մենք նրանց հետ կվարվենք այնպես, ինչպես վարվել ենք...»[23]:

Այս դեպքերի մասին փոքր-ինչ այլ, տարբերակված բացատրություն է ներկայացնում ականատես Փ. Թերլեմեզյանը, որը հիշում է. «Ես իհարկե հետո իմացա, որ Նաջի բեյ Վանումն էլ դաշնակցական շեֆերին ժողովի էր հրավիրած: Այդ շեֆերը խոստացել էին Նաջի բեյին, որ անմիջապես իրենցից մեկ կամ երկու մարդու ուղարկեն Պարսկաստան, կամավորական բանակները հետ կասեցնելու համար... Ընդհանրապես անհանգիստ էր դրսի կացությունը, ամենը իրենց կարողության չափով զինված սպասում էին խռովությանց: Ես էլ նույն զգացումով տարված... նկարներ էի պատրաստում, երբ թյուրքական պառլամենտի դաշնակ անդամ Վռամյան էֆենտին սենյակս մտավ: Հարցրի, թե ինչ կա, ինչպես է կացությունը: Նա պատասխանեց, որ ամեն տեղ զինվորների խմբեր են ման գալիս՝ հսկողության համար և ավելացրեց. «Մի բան ինձ համար որոշ է, որ թյուրքերը սաստիկ վախենում են մեզանից»: Հարցնում եմ, թե ինչի հիման վրա է ասում այդ խոսքը: Նա գրպանից մի հեռագիր է հանում ու կարդում: Այդ հեռագիրը Բաշկալեի սահմանագլխից տրված էր թյուրք կոմիսար, վերև հիշված Նեջի բեյի կողմից, որը կսպառնար մեր ծծկեր երեխաներին էլ մորթոտել տալ... Նա պատմեց Նեջի բեյի հետ Վանում կայացած ժողովի և իրենց խոստման մասին, որ Պարսկաստան մի ընկեր պիտի ուղարկեին համոզելու համար կամավորական բանակի հրամանատարին հետ կենալու թյուրքերին գրգռող իրենց գործունեությունից: Բայց հետո ասաց. «Մենք չկատարեցինք մեր խոստումը, անօգուտ համարելով այն, որովհետև մեր կուսակցության Արևելյան բյուրոն է ձեռնար-

[23] Оборона Вана. 7 апреля – 4 мая 1915 г. 1917, 14.

կած այդ գործին, հետևապես մենք համակերպում ենք: Բայց օրերս պարսկական սահմանն անցնող մի քյուրդ բռնվել է, որի քյազախկի օձիքում գտնված է եղել մի նամակ, որ մեր տղերք ուղարկել են Պարսկաստանի կամավորների պետին, խնդրելով նրանց շուտով հասնել այստեղ: Ահա այդ բռնված նամակն է պատճառ այս հեռագրին... Հարց եմ տալիս, թե Նեջին պարզ կերպով ասում է, որ ձեզ պիտի կոտորենք, էլ ինչպես թե վախենում է մեզանից: Նա գրգռված, իր մյուս գրպանից դուրս է քաշում մի ուրիշ թուղթ, որի վրա գրված է մի ընդարձակ բողոքի հեռագիր ուղղված Թալաթ փաշային, Նեջի բեյի դեմ: Ես զայրացած գոռում եմ. «Ծո, հիմար, եթե դուք կարծում եք, որ Նեջի բեյ հակառակ Թալաթ փաշայի հրահանգներին է գործում, չարաչար սխալվում եք»: Նա բորբոքվելով՝ ասաց. «Նախ, Թալաթը մեր շատ մոտիկ ընկերն է, հետո ձեզ համար դժվար է հասկանալ քաղաքական խնդիրները»[24]:

Արամն ու Ա. Վռամյանը ստիպված համաձայնվում են մեկնել Սարայ, սակայն մի պայմանով, որ իշխանությունները թույլ տան, որ արևմտահայ կամավորներն իրենց զենքով հետ վերադառնան հայրենիք: Եվ քանի որ առաջարկությունն անընդունելի էր Թ. Ջևդեթի համար, Ա. Վռամյանն ու Արամն էլ իրենց տեղից չշարժվեցին[25]: Ավելին, Ա.Վռամյանն իր հերթին հակադարձելով Ջևդեթին՝ իշխանություններին մեղադրում է ստեղծված կացության համար: Արտաքուստ փոքր, սակայն բազում հակասություններով լի այս դրվագը ճակատագրական նշանակություն պիտի ունենար դեպքերի հետագա զարգացման վրա:

Ռուսական զորամիավորումների ընդհանուր նահանջի հոգեբանական հետևանքները

1914 թ. վերջերին Էնվերի գլխավորությամբ թուրքական զորքերի ընդհանուր և անակնկալ հարձակումը Կովկասյան ռազմաճակատում առաջ բերեց ռուսական զորամիավորումների ընդհանուր նահանջ՝ Սև ծովից մինչև Սալմաստ և Ուրմիա, «բայց սարսափը տաճիկների վրայից երկար ժամանակ չէր անցնում»[26]: Արդյունքում, 1914 թ. դեկտեմբերի 16(29)-ին Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերը՝ գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխավորությամբ,

[24] **Թերլեմեզյան** 2017, 316, 319–320:
[25] Տե՛ս Оборона Вана, 7 апреля – 4 мая 1915 г. 1917, 15.
[26] **Ա-Դ** 1917, 128:

Կովկասի փոխարքայի օգնական, գեներալ՝ Ա. Միշլաևսկու[27] կողմից հրաման ստացան նահանջել դեպի Ջուլֆա, որի պատճառը, Ա. Եկարյանի հավաստմամբ, «չհասկցանք, բայց որոշ էր թէ թրքական ճնշումը չէր որ զիրենք ստիպած էր այդ քայլը առնելու»[28], և որը, Ե.Ֆ. Լուդշուվեյտի դիտարկմամբ, հազիվ թե նպատակահարմար էր ռազմագիտական տեսանկյունից[29]: Կովկասյան բանակի հրամանատարն իր այդ որոշումը հիմնավորում էր նրանով, որ անհրաժեշտ էր կրճատել «ռազմավարական ճակատը»՝ նախապատրաստվող Սարիղամիշի ճակատամարտին ընդառաջ և բացի այդ, անհրաժեշտ էր համարում պաշտպանել Անդրկովկասի սահմանները թուրքական գերակշռող ուժերից: Իսկ Հ. Մորգենթաուն այն գնահատում է որպես «լավ ռազմագիտութիւն մը... յաղթական բանակին համար»[30]՝ նահանջող թուրքական զորքին հիմնովին ջախջախելու համար: Թեև գեներալ-մայոր Ֆ. Չերնոզուբովը ապացուցում էր, որ նահանջը ոչնչով չէր արդարացվում, սակայն ի վերջո նա ստիպված էր ենթարկվել իր վերադասի հրամանին:

Այդ ամենի հետևանքը եղավ այն, որ 1914 թ. դեկտեմբերի 27-ին ռուսական զորքերը առանց մարտի թողեցին Սոուջբուլաղը և Բաշկալեն, որոնք գրավվեցին Ջևդեթի և Խալիլի թուրք-քրդական ուժերի կողմից: Այդ առիթով 1914 թ. նոյեմբերի 30-ին Թ. Ջևդեթի փոխանորդ Մեհմեդ Շերիք բեյը մասնավոր գրությամբ ժողովրդին ծանուցեց. «Մեր արսլան կուսակալի ջանքերով թշնամին յետ շպրտուեցաւ: Ամէն ոք անդորր ու խաղաղ իր գործերով թող զբաղվի»[31]:

Այնուհետև, 1915 թ. հունվարի 5-ին թուրքերը գրավեցին Ուրմիան, Մարաղան, հունվարի 8-ին՝ Սալմաստը, Խոյը, իսկ 1915 թ. հունվարի 14-ին թուրքական առաջապահ ուժերը և քրդական ջոկատները Ահմեդ Մուխթար Շամ-

---

[27] Ա.Զ. Միշլաևսկին (1856 – ?) ռուսական զորքերի Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ կոմս Ի.Ի. Վորոնցով-Դաշկովի օգնականն էր: 1914 թ. դեկտեմբերի 11(24)-ին նա գեներալ Ն.Ն. Յուդենիչի հետ ժամանում է գործող բանակ և ստանձնում ռուսական զորքերի Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի պաշտոնը: Տե՛ս Список генералам по старшинству 1914, 137, նաև **Залесский** 2000, 158–159.

[28] Տե՛ս **Յուշեր Արմենակ Եկարեանի** 1917, 182:

[29] Տե՛ս **Лудшувейт** 1966, 76.

[30] Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները 1919, 247:

[31] **Կոսոյեան** 1992, 35:

խալի հրամանատարությամբ մուտք գործեցին Թավրիզ՝[32] իրենց հետ տանելով ավերի, կողոպուտի, կոտորածների և արյան մողոքը[33]: Միաժամանակ, քաջալերիչ հայտարարություններով բարձրացվեց թուրքերի բարոյալքված տրամադրությունը և կասեցվեց նրանց մեջ տիրող խուճապը:

Ռուսական բանակի նահանջը հոգեբանական ծանր հետևանք ունեցավ հայերի համար, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այն ուղեկցվում էր թուրք և քուրդ ազգաբնակչության մեջ շրջանառվող ստահոդ քարոզչությամբ: Այդ մասին դեպքերի ժամանակակից Արմենակ Ամրիկյանը հիշում է. «...Բայց տխուր լուր ստացանք, որ ռուսաց բանակը կամավորների հետ Սարայից հետ է նահանջում դեպի Սալմաստ: Տխրեցինք, բայց քրդերն ուրախացան՝ ասելով. «Էնվեր փաշեն Ալեքսանդրապոլ գրաված է և անցել է դեպի Թիֆլիս, ընդհանուր հայեր և ռուսներ մնացել են թուրքին գերի»[34]:

Իրականում, թուրքական քաղաքացիական և զինվորական իշխանությունները մտածում էին ոչ թե հակառակորդի դեմ հակահարձակման անցնելու, նրան հետապնդելու և նրա դեմ կռվելու մասին, այլ իրենց ուժերը Վանի շրջանի գյուղերի հայ բնակչության դեմ կենտրոնացնելու և նրանց կոտորելու համար: Այդ մասին ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի հուշերում կարդում ենք, որ Վանի շրջանում «թիւրք զօրավարներու աչքին՝ Ռուսներուն ետ քաշուիլը պատերազմին մէկ բարեբաղդ դարձուածքն էր, գլխաւորաբար անոր համար, որ՝ Հայերը կը զրկէր իրենց պաշտպաններէն եւ անոնց բաղդը կը յանձնէր թիւրք բանակին: Հետեւաբար, փոխանակ նահանջող թշնամիին հետեւելու, թիւրք բանակը ետ դարձաւ եւ Վանի հողամասը արշաւեց: Փոխանակ ռուսական մարզուած զինուորներով բանակին դէմ կռուելու, Թիւրքերը իրենց հրացանները, գնդացիրները եւ ուրիշ զէնքերը դարձուցին Վանի գյուղերը բնակող կիներուն, տղոց եւ ծերերուն դէմ»[35]:

Ճիշտ է, ռուս-թուրքական կռիվներից առաջ Վանի նահանգը համեմատաբար ամենաապահով և հանգիստ վայրն էր Օսմանյան Թուրքիայում, բայց ռուսների նահանջից երես առած թուրք կառավարությունը բազմիցս բռնի,

---

[32] Տե՛ս **Лудшувейт** 1966, 76–77, նաև՝ Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին 1984, 23:

[33] Տե՛ս **Лудшувейт** 1966, 76–77, նաև՝ Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին 1984, 23:

[34] Հուշագրական ժառանգություն. ՀՃՈ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԴ 2011, 328:

[35] Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները 1919, 247:

արհեստական առիթներ ստեղծեց հայ-թուրքական ընդհարումներ հրահրելու և գուցե այն իրեն համար նպաստավոր ձևով վերջացնելու համար՝ նախքան կամավորական գնդերի վերադարձը: Սակայն Ա. Վռամյանի, Իշխանի և Արամի հեղինակության, ինչպես նաև տեղի հասարակական-քաղաքական ուժերի շրջահայաց քաղաքականության և ժամանակ շահելու հեռատեսության շնորհիվ հնարավոր եղավ խուսափել բարդություններից: Այդուհանդերձ, թուրքերին հաջողվեց իրենց հայաջինջ քաղաքականությունը Վասպուրականում գործողության մեջ դնել այն բանից հետո, երբ ռուսական զորքերը ժամանակավորապես հետ քաշվեցին գրավված վայրերից, իսկ «սմքած թուրքը նորէն շունչ առաւ, սկսաւ յոխորտալ... սիրտ առավ, նոր ուժեր կազմակերպեց»[36]: Ռուսական բանակի 1914 թ. դեկտեմբերյան ժամանակավոր նահանջով Վանի նահանգը մտավ ճգնաժամային մի շրջափուլի մեջ, որի ժամանակ բացահայտվեց իշխանությունների մինչ այդ քողարկված հակահայ քաղաքականությունը, որի անմիջական հետևանքը եղան վերագրավված շրջանների հայ ազգաբնակչության նկատմամբ փոքր-ինչ ավելի ուշ իրականացված սանձարձակ բռնությունները, հալածանքները, կոտորածները և թալանը:

Ինչու՞ իթթիհատականներն իրենց հայաջինջ ծրագիրը Վանի նահանգում ձգձգեցին մինչև 1915 թ. գարուն

Կարծում ենք, որ այն ուներ իր տրամաբանական բացատրությունը: Առաջին աշխարհամարտի սկզբին գերմանական զինվորական հրամանատարությունը մեծ հույսեր էր փայփայում, որ մի քանի ուժեղ և լայնածավալ հարձակումներով կարող է ջախջախել ու խորտակել ֆրանսիական և ռուսական բանակները և պարտվող պետություններին պարտադրել իր համար ձեռնտու ծանր պայմանագիր: Այդ դեպքում Թուրքիան՝ համաձայն Գերմանիայի հետ ունեցած իր պայմանավորվածության, իր գերիշխանության տակ կվերցներ ողջ Կովկասը և հայ ժողովուրդն ամբողջովին կհեծեր թուրքական բռնակալության տակ և որևէ վտանգ չէր ներկայացնի Թուրքիայի համար: Դրանով միաժամանակ վերջ կդրվեր Հայկական հարցին և բնականաբար, կարիք չէր զգացվի ոչնչացնել հայերին: Ընդհակառակը, վերականգնված և ամբողջական Օսմանյան կայսրության մեջ բնակվող 5 մլն ավելի հայերը՝ որպես հմուտ հողագործներ, արհեստավորներ, բանվորներ, առևտրականներ, վաճառականներ և մտավոր բնագավառի գործիչներ, կարևոր ներդրում կունենային երկրի առաջադիմության ու զարգացման համար, իսկ հետագայում, աստի-

[36] **Յուշեր Արմենակ Եկարեանի** 1947, 183:

ճանաբար կձուլվեին թուրքերի հետ և կդառնային Օսմանյան կայսրությունը զորացնող կենսունակ մի ուժ:

Սակայն, ձախողվում են Հինդենբուրգի ու Լյուդենդորֆի գերմանական կայծակնային պատերազմի ծրագրերը: Միաժամանակ, ֆրանսիական զորքերը կասեցնում են գերմանական բանակների հաղթարշավը և փակում Փարիզ տանող ճանապարհները, որից հետո պատերազմը դառնում է դիրքային և տևական: Իր հերթին, Էնվերն իր բանակով 1914 թ. վերջերին և 1915 թ. սկզբներին խայտառակ պարտություն է կրում Սարիղամիշի ճակատամարտում, իսկ Ջեմալն էլ 1915 թ. փետրվարի 2-ին՝ Սուեզում: Բացի դրանից, սկսած 1915 թ. գարնանից՝ ռուսները հարձակողական գործողություններ են նախապատրաստում Կովկասյան ռազմաճակատում, իսկ անգլո-ֆրանսիական ուժերը Դարդանելից ուղղակի սպառնում էին կայսրության մայրաքաղաքին: Ըստ էության, գերմանա-ավստրո-հունգարական ու թուրքական խմբավորումը կորցնում է հաղթանակի հասնելու իր բոլոր հնարավորությունները:

Երիտթուրքական իշխանությունը խուճապի մեջ էր և պատրաստվում էր թողնել Կ. Պոլիսը ու տեղափոխվել Անատոլիայի խորքերը: Հ. Մորգենթաուն մարտ ամսին Պոլսում տիրող վիճակի մասին գրում էր. «Այդ միջոցին մայրաքաղաքէն արտագաղթը սկսած էր. թիւրք կիները եւ տղաքը դէպի ներքնագաւառ կը մէկնեին. բոլոր դրամատուները ստիպուեր էին իրենց ոսկեդրամը Փոքր Ասիա ղրկել. Բ. Դուռի պաշտօնաթուղթերը արդէն Էսկի-Շէհիր փոխադրուած էին. եւ գրեթէ բոլոր Դեսպանները եւ իրենց հետեւորդները, ինչպէս նաեւ կառավարական պաշտօնեաներու մեծ մասը՝ մեկնելու պատրաստութիւն տեսած էին: Թանգարանի տնօրէնը, որ մէկն էր այն վեց Թիւրքերէն, որոնց Թալէադ ակնարկած էր իբր «հնութիւններ սիրող», Պոլիսի արուեստի գեղեցկագոյն գործերուն մեծ մասը նկուղներու մէջ թաղած էր կամ զանոնք պաշտպանելու համար պահած էր... Սուլթանը եւ կառավարութիւնը եւ Դեսպանները Փոքր Ասիա փոխադրել սահմանուած կառախումբերը կայարանը կը սպասէին: Անոնք շոգի վրայ էին, պատրաստ շարժելու՝ նշան տրուած վայրկեանին»[37]:

1915 թ. հունվարին հրավիրվեց բրիտանական կառավարության գաղտնի մի ժողով, որի ժամանակ քննարկման դրվեց այն հարցը, թե որտեղի՞ց և ինչպե՞ս հարձակվել Թուրքիայի վրա և միանգամից ու վճռական հարվածով այն

[37] Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները 1919, 168–169:

ջլատել և դուրս հանել պատերազմից: Քննության սեղանի վրա դրված էր երկու առաջարկ. մեկը՝ ծովային նախարար Չերչիլի, մյուսը՝ ռազմական նախարար լորդ Քիտչենների: Չերչիլն առաջարկում էր ռազմանավերով ճեղքել նեղուցները, զորք ափ հանել ցամաքում՝ Գալիպոլիի մոտակայքում և սուրալով դեպի Կ. Պոլիս, գրավել այն ու ծովային ճանապարհով ռուսների հետ կապվելուց հետո անգլո-ռուսական նոր ռազմաճակատ բացել Բալկաններում՝ Ավստրո-Հունգարիայի դեմ: Ընդ որում, երբ սկսվեր Դարդանելի գործողությունը, անգլիական զորքերը պետք է գրավեին Հայֆան և Ալեքսանդրեթը, որոնցից վերջինն անգնահատելի արժեք ուներ Միջագետքի նավթային ուղիներին տիրանալու հարցում:

Լորդ Քիտչենները իրատեսական չէր համարում նեղուցներին հարվածելու ծրագիրը, որովհետև գերմանացիները Դարդանելի նեղուցն ամբողջությամբ ռազմակալել և ականապատել էին, և մեծ ուժեր էին պահանջվում այն ճեղքելու համար: Ուստի ռազմական նախարարն առաջարկում է ավելի հեշտ և ճիշտ տարբերակ, այն է՝ զորք ափ հանել Կիլիկիայում՝ Միջերկրական ծովի Իսկենդերունի ծովածոցում և սրընթաց խուժել Անտիոքի դաշտ, ապա դեպի հյուսիս-արևելք՝ Դիարբեքիրի, Բիթլիսի և Վանի նահանգներ՝ միանալով ռուսական զորքերին: Դրանով Օսմանյան կայսրությունը կբաժանվեր երկու մասի և կչեզոքացվեր Ջեմալ փաշայի՝ հարավի ծրագիրը, որից հետո անգլո-ռուսական միացյալ ուժերը միասին կգրավեին Անատոլիան և կշարժվեին դեպի Կ. Պոլիս:

Երկար վեճերից հետո, անգլիական կառավարությունը 1915 թ. հունվարի 13-ին երկու ձայնի առավելությամբ ընդունում է Չերչիլի պլան-ծրագիրը, որն անգլո-ֆրանսիական ուժերի համար ավարտվում է աղետով[38]: Չնայած դաշնակիցները հետ քաշվեցին, սակայն նրանց զորքերի ափ դուրս գալու վտանգը չվերացվեց, որովհետև Դարդանելում թուրքական բանակի հաջողությունը նրա համար դարձել էր պյուրոսյան հաղթանակ՝ պատճառելով մարդկային ուժի ու ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ:

Թալեաթը, Էնվերը և մնացած իթթիհատականները համոզված էին, որ եթե դաշնակիցները մտնեին Կ. Պոլիս, դրվելու էր հայկական վեց վիլայեթներից «Ինքնավար Հայաստան»-ի ստեղծման հարցը: Ահա այդ պատճառով, 1915 թ. հունվար-փետրվար ամիսներին նրանք վերջնականապես որոշում են

[38] Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Готлиб** 1960, 110–117.

կայացնում և գործողության մեջ դնում Օսմանյան Թուրքիայում բնակվող բոլոր հայերի ֆիզիկական բնաջնջման ծրագիրը:

Իթթիհատականները, որոնք Բորիս Բարթի բնորոշմամբ իրենց ազատամիտ- լուսավորական գաղափարները միախառնել էին թուրքական նացիոնալիզմին և որից ծնված նոր՝ ընդհանուր գաղափարախոսությունը վտանգ էր ներկայացնում կայսրության ժողովուրդների համար[39], նախքան իրենց հայաջինջ սպանդը սկսելը, Փոքր Ասիան բաժանել էին մի եռանկյունու, որի արևմուտքում գտնվում էր Կ.Պոլիսը, հարավում՝ Զեյթունը, իսկ հյուսիս-արևելքում՝ Վանը: Նախապես որոշվել էր ամենից առաջ զինաթափել «...եւ շարժելու բոլորովին անընդունակ վիճակի մը մէջ դնել հայկական սպառնացող վիշապին այս երեք գլուխները...»[40]:

Վանի նահանգի կանխամտածված և կազմակերպված կոտորածների սկիզբը

Ռուս-թուրքական և թուրք-պարսկական սահմանագծի ուղղությամբ կատարված ռազմական գործողությունները, ծավալված դեպքերը և ռուսական զորքի 1914 թ. նահանջն իրենց արձագանքը գտան Վասպուրականի գավառներում: Այդ մասին Դիանա Աբգարը նշում է. «...անզէն քրիստոնեայ բնակչութիւնը, որ կազմուած էր հայերից, իր հողի հաւատարիմ որդիներից, եւ մի քանի հազար ասորիներից, բաց աչքերով տեսան իրենց ճակատագիրը»[41]:

Հայտնի է, որ Պարսկաստան ներխուժած թուրքական բանակի հրամանատար Խալիլ բեյը 1914 թ. վերջերին պարտություն կրելով հայ կամավորներից և ռուսական բանակից, նահանջել էր Վան և այնտեղ Ջևդեթին հայտնել, որ ճանապարհին «վերացրել» էր Ուրմիայի և Սալմաստի քրիստոնյաներին: Այժմ Ջևդեթն էր պատրաստվում Վանի նահանգը «մաքրել» հայերից: «Ժամ առ ժամ կը սպասուէր յառաջխաղացմանը, մանաւանդ որ Սարայի ռուս յառաջապահները հասած էին Մոլահասան գիւղը, Արճակէն քանի մը ժամ հեռուն: Ակնդէտ եւ սրտատրոփ կը սպասուէր, թէ մօտ է Վանի գրաւումը, երբ կը տեսնուէր ինչպէս թրքութիւնը, թողած ամէն ինչ, սարսափահար կը փախչէր: Ինքնապաշտպանութեան խմբերը Այգեստանի, քաղաքի եւ գավառներու մէջ

[39] **Բարթ** 2011, V:
[40] **Պալաքեան ծ. վարդ.** 1922, 60:
[41] **Դիանա Աղաբեկ Աբգար** 2011, 91:

զինուած կը սպասէին դիմագրաւելու որեւէ դժբաղդ անակնկալի, որ կրնար ծագիլ պարտուած բանակի նահանջումով»[42]:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից թուրքական իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան Վանի սահմանամերձ գյուղերի հայկական և ասորական բնակչության կոտորածին ու ալան-թալանին, որը և դարձավ «արեւմտահայ հատուածի աշխարհասասան ողբերգութեան նախաբանը»[43], քանի որ արևմտահայության բնաջնջումը սկսվեց հենց Վան-Վասպուրականից: Սակայն, Վանի նահանգում իրականացված կոտորածները՝ հայ հոծ ազգաբնակչության, հատուկ պայմանների և ռազմական գործողությունների թատերաբեմ լինելու պատճառով, համապատասխան ուշադրության չի առնվել: Այս մասին է հաստատում Հալեպի գերմանական հյուպատոս Ռոսլերը՝ ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված 1915 թ. դեկտեմբերի 20-ի Գերմանիայի պատասխանատվությունը արմենոցիդի փաստերի կոծկման վերաբերյալ իր զեկույցում[44]:

Հայոց ցեղասպանության երկրորդ ծրագրում, որը թվագրվում է 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներով և հայտնի է «10 պատվիրաններ» անունով[45], նշվում է. «...3. Մասնաւոր պատշաճ միջոցներով իսլամական կարծիքը պատրաստել: Վանի, Էրզրումի, Ատանայի պէս տեղեր, որ Հայերը արդէն իսկ իրենց ընթացքովը իսլամներուն պժգանքը շահած են, կազմակերպեալ դէպքեր ստեղծել, ինչպէս Ռուսիա արաւ Պաքուի մէջ: 4.Էրզրումի, Վանի, Մամուրէթ-իւլ-Ազիզի ու Պիթլիսի պէս նահանգներու մէջ գործադրութիւնը բոլորովին ժողովուրդին թողելով, զօրքերն ու կարգապահական ուժերը իբր թէ ջարդերը արգելելու գործածել: Իսկ Ատանայի, Սվազի, Պրուսայի, Նիկոմիդիոյ և Իզմիրի պէս տեղերը ընդհակառակը իսլամներուն օգնել զինուորական ուժով»[46]:

---

[42] **Կոսոյեան** 1992, 18:

[43] **Կոսոյեան** 1992, 19:

[44] Материалы Политархива МИД кайзеровской Германии 1995, 281, նաև Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии, 2003, т. 2, ч. 1, 15.

[45] Հայերի ցեղասպանության 1876 թ.՝ առաջին և 1915 թ.՝ երկրորդ ծրագրերի համեմատական վերլուծությունը տե՛ս **Սաֆրաստյան** 2007, 25, 36, նաև **Սաֆրաստյան** 2009, 170:

[46] Տե՛ս **Վերջին լուր,** 23.03.1919, նաև՝ **Լէօ** 1925, 151–152, նաև՝ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. I, 2005, 27–28:

Թուրք ցեղասպանագետ Թաներ Աքչամը իր հոդվածներից մեկում անդրադարձել է Թուրքիայի արխիվներում պահվող մի փաստաթղթի, որը հայերի զանգվածային ոչնչացման վերաբերյալ մինչ օրս հայտնի ամենահին օսմանյան փաստաթուղթն է: 1914թ. դեկտեմբերի 1-ով թվագրված այդ որոշումն ընդունվել է Էրզրումի երիտթուրքական կոմիտեի կողմից և նույն օրը «գաղտնի» նշումով ուղարկվել Ստամբուլ: Որոշումն ուղարկվել է հեռագրի տեսքով և պահանջվել է, որպեսզի ոչնչացվի հեռագրատանն առկա կրկնօրինակը: Նշված որոշումը վերաբերում էր Վանի և Բիթլիսի հայերի բնաջնջմանը: Փաստաթղթի 4-րդ հոդվածում նշվում էր, որ «թե՛ կենտրոնում և թե՛ շրջաններում անհրաժեշտ է նախապես ձերբակալել հեղափոխության առաջնորդ հանդիսացող կամ մուսուլմանների վրա հարձակվել պատրաստվող հայերին, իսկ հարձակվելու դեպքում՝ աքսորել նրանց Բիթլիս և ոչնչացնել»[47]:

Թ.Աքչամի գնահատմամբ՝ այն ըստ էության միայն տղամարդկանց վերաբերող մի յուրատեսակ «կանխարգելիչ միջոցառում» էր, և որոշման մեջ նշված «ոչնչացում» (թուրք.՝ İmha) բառի կիրառությունը չափազանց կարևոր է, քանի որ իրականում այն օգտագործվել է ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց և երեխաների նկատմամբ:

Ցեղասպանագետը միաժամանակ տեղեկացնում է, որ թուրքական արխիվներում առկա են նաև 1914–1915 թթ. տարբեր նահանգապետների (օրինակ՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի) կողմից Ստամբուլ ուղարկված մի շարք հեռագրեր, որոնցում նրանք բացեիբաց խոսում են հայերին ոչնչացնելու անհրաժեշտության մասին և անգամ այդ նպատակով ճնշում են գործադրում Ստամբուլի վրա[48]:

Այն որ Վանի նահանգի կոտորածներն իրոք եղել են նախապես կանխամտածված և կազմակերպված, մենք իմանում ենք վենեսուելացի զինվորական Ռ. դե Նոգալեսի վկայությունից: Խոսելով Ալջավազի ջարդերի մասին՝ նա նշում է, որ գավառի կայմակամն իրեն ցույց էր տվել Վանի հայերի բնաջնջման՝ նահանգապետի գրավոր հրամանը: Նա նշում է, որ «...ես տեսա այդ հրամանը...», ըստ որի, նախատեսվում էր ոչնչացնել նահանգի 12 տարեկան և դրանից բարձր արական սեռի ողջ հայ բնակչությանը[49]:

Թուրքական իշխանությունները դասալիք հայ զինվորներին հետապնդելու պատրվակով 1914 թ. դեկտեմբերից սկսած «գրեթէ ամէն կողմ ծայր տուած

[47] https://mamul.am/am/news/158894

[48] https://mamul.am/am/news/158894

[49] **де Ногалес** 2006, 54.

էին յարձակումներ հայերու և իրենց ինչքին դէմ»[50], որն ուղեկցվում էր գյուղերում տների հրդեհումով, գույքի բռնագրավմամբ և սպանություններով: Թուրքական կառավարության վարած քաղաքականությունը օրեցօր դառնում էր թշնամական, ապա՝ հայասպան, իսկ երկիրն աստիճանաբար ենթարկվում էր անիշխանության: Անասելի բռնություններից հետո սկզբում անհատական, իսկ հետո զանգվածային կարգով ամբողջ նահանգում՝ հատկապես ծայրամասային գավառներում, ծայր են առնում սպանություններ ու կոտորածներ: Նորից գործի են անցնում զինված քրդական ավազակախմբերը և բաշիբոզուկները, որոնց ամեն տեսակ գործողությունները հովանավորում էին կառավարությունը և նրա տեղական պաշտոնյաները: Բնավ չկար ապահովություն, իսկ գյուղից-գյուղ և քաղաքից-քաղաք երթևեկելը դառնում էր անհնար: Նահանգի հայ ազգաբնակչությունը կառավարության գաղտնի թելադրանքով ենթարկվում էր սանձարձակ շահատակությունների, խուզարկությունների, ահաբեկման, ծեծի և թալանի: Թաներ Աքչամը, խոսելով կոտորածների մասին, վեր է հանում այն իրողությունը, որ կենտրոնական իշխանությունը Վան ուղարկած իր հեռագրերում ցուցում էր տալիս. «Շարժվեք համաձայն տեղական անհրաժեշտության, մինչև որ հայերի վերաբերյալ վերջնական որոշում ստանաք»[51]: Արդյունքում, 1914–1915 թթ. աշնանը Վանի գավառներում՝ համաձայն Կ. Պոլսից ստացված հրահանգների, 14–15 տարեկանից բարձր տղամարդկանց մեծ մասը ոչնչացվեց[52]:

Ճիշտ է, կային թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք նպատակահարմար չէին համարում Վանի նահանգի հայության կոտորածը: Դրանցից մեկը Վանի կուսակալ Թահսին բեյն էր, որը նշում էր, որ «վանեցիները կազմակերպված ժողովուրդ են, գյուղ թե քաղաք կմիանան, մեծ վնաս կհասցնեն թուրքերին, իրենք էլ երկրի տերը կդառնան, նրանցից պետք է զգույշ լինել»[53]:

Նույն կերպ էր մտածում նաև Վանի հազարապետ Հուսեին բեյը, որը դիմելով թուրքերին զգուշացնում էր. «դուք ուզում եք երկրի կենտրոնում նոր ռազմաճակա՞տ բացել: Նրանք՝ հայերը իրենց անառիկ լեռների գլխից անգամ քարեր գլորելով՝ մեր զինվորների մեջքը կկոտրեն: Զենք ունեն, կդիմադրեն: Ինչ էլ որ լինի՝ նրանց մի կպեք, թող իրենցով մնան, որովհետև մենք

[50] **Բինոն** 1919, 21:

[51] http://asekose.am/hy_AM/news/1/209300-1915-t-haykakan-apstamboutyounneri-veraberyal-pndoume-sout-etaner-aqcam.html:

[52] **Ա-Դո (Հովհաննես Տեր- Մարտիրոսյան)** 2013, 140:

[53] **Սոլախյան** 2000, էջ 10:

ստիպված կլինենք երկրի սիրտը հանձնել նրանց և թուրքերին կոտորել տալ»[54]:

Բայց նրանց լսող չկար: Դեռ ավելին, հետագայում Թահսինին փոխադրեցին Էրզրում, իսկ Հուսեին բեյին պաշտոնանկ արեցին:

1914 թ. նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի սկզբից տարածվեցին չարագուշակ լուրեր, որոնք արյունոտ գույներով էին պատկերում թուրք-քրդական գազանությունները և Վասպուրականի հայության ողբերգական վիճակը: Ոճիրներ տեղի ունեցան Կարճկանի, Ալջավազի և Բերկրիի շրջաններում: Մասնակի սպանություններին հետևեցին խոշոր իրադարձությունները:

Դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում, երբ ռուսական զորամասերն արդեն նահանջել էին Աղբակից, թուրքական կանոնավոր զորամասերը բաշիբոզուկների հետ միասին հաշվեհարդար իրականացրեցին Հեքիարիի նախկին վիլայեթի կենտրոն Բաշկալեի, ապա՝ Աղբակի և Ս. Բարդուղիմեոս վանքի շրջակա գյուղերի հայ բնակիչների նկատմամբ[55]:

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերը, ոստիկանական ջոկատներն ու ամեն կարգի հանցագործ տարրերը ջարդեր կազմակերպեցին Սարայի շրջանի հայաբնակ գյուղերում՝ (Պազ, Արեգ, (Արաք), Փիրս (Պիս), Ալալան, Ալազ (Ալոզ), Սորան, Ռալիմ, Ռասուլան, Ախոռիկ, Հասան-Թամրան, Թաշօղլի, Խարաբասորիկ և այլն)[56] շուրջ 1600 հայերի (մի մասը նեստորական) հավաքելով դաշտում՝ բնաջնջեցին[57]: Ընդհանուր առմամբ 1914 թ. վերջերին Սարայում և Բաշկալեում կազմակերպվեց մոտ 10 հազ. հայերի կոտորած[58]: Նույնը կատարվեց նաև Հայոց Ձորում և Շատախում:

Հ. Մանուկյանի կողմից ՀՅԴ-ի 9-րդ ժողովին (1919 թ., Երևան) Վասպուրականի դեպքերի մասին ներկայացված տեղեկությունից (1913–1918) իմանում ենք, որ մինչև 1915 թ. փետրվարն արդեն տեղի էին ունեցել ա) հայ զինվորների և ժանդարմների զինաթափումը, որը ստեղծեց քաղաքական անվստահության հեղձուցիչ մթնոլորտ հայերի հանդեպ և սրեց հարաբերությունները հայերի ու մահմեդականների միջև, բ) զինաթափված հայ զինվորներն օգտագործվում էին որպես գրաստ, որը վիրավորեց նրանց ինքնասիրությու-

---

[54] **Սոլախյան** 2000, էջ 11:
[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:
[56] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:
[57] Տե՛ս **Պառպի** 1919, 139:
[58] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 102, թ. 42:

նը, գ) զինաթափ եղած հայերը զանազան պատրվակներով կա՛մ հեռացվեցին հայկական գավառներից, կա՛մ էլ գնդակահարվեցին և գաղտնի սպանվեցին Կարինի և Պարկաստանի ճանապարհների վրա, դ) 16–60 տարեկան բոլոր մահմեդականները, մասնավորապես քրդերը, կառավարության կողմից զինվեցին «միլիս» անվան տակ և նրանց հանձնվեցին ոստիկանական ժանդարմական պաշտոններ, է) սույն միլիսները շահատակություններ կատարեցին Այլուր, Խավենց, Ամյուկ, Բել, Նանեկանց, Ընձակ, Եղեգիս, Մղկներ գյուղերում, զ) համիդիե գնդերի մնալը Վանի հայաբնակ գավառներում և նրանց չարագործությունները Հասան Թամրան, Ախոռիկ, Բողազքեսեն, Հազարեն, Մանդան, Պզտիկ գյուղերում, է) Բաշկալեի և շրջակա գյուղերի, ինչպես նաև Ախոռիկի, Ազարիկի, Հասան Թամրանի, Հազարենի, Դաշօղլուի ջարդերը[59]:

Կոտորածների առաջին փուլի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ ջարդերն ընթանում էին անօրինակ թափով և առանձնանում էին մի կողմից նենգամիտ խաբեութիւններով, մյուս կողմից անդիմադրելիությամբ, «որոնց դէմ բողոքի հուժկու ձայն չէր լսւում, ըմբոստացած ոգու մարտնչումը չէր երևում»[60]:

Ոճրագործներից բաղկացած Teşkilâtı Mahsuse-ի նորակազմ ջոկատները միջլիսի և նահանգային ոստիկանության հետ հայկական գյուղերում դիմեցին ամեն տեսակ բռնարարքների, ոչ միայն հայ բնակչությանն ընկճելու և թալանելու համար, այլև հետապնդում էին արյունալի միջադեպեր ստեղծելու նպատակ, որով հայերին կարելի էր մեղադրել «փրովոքասիոնի յանցապարտութեամբ»[61]:

Այս ամենը, ինչպես իրավացիորեն Վ. Տատրյանն է նկատում, գալիս է ապացուցելու, որ իթթիհատի ցեղասպանության ծրագրերն իրենց սաղմնային վիճակում գոյություն ունեին արդեն 1914 թ. ամռանն ու աշնանը և էլ ավելի հստակեցվեցին նոյեմբերից հետո, երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ Գերմանիայի հրահրումով: Հայկական «սադրանքներն» իրենց հաճախակությամբ և տարողունակությամբ գրեթե աննշան երևույթներ էին պատերազմի լայնատարած պարունակի մեջ[62]:

---

[59] Այդ մասին տե՛ս **Մանուկեան** 1937, 55–56:

[60] **Ա-Դօ** 1917, 191:

[61] **Տատրեան** 1995, 47:

[62] Տե՛ս **Տատրեան** 1995, 51:

Եզրակացություններ

Վասպուրականի հայության տեղահանությունները և կոտորածները մեծ թափ ստացան հատկապես Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները սկսելու հետ մեկտեղ և սպառնալից դրսևորումներ ստացան հատկապես 1914 թ. նոյեմբերի երկրորդ կեսին, երբ ավելի ու ավելի հրահրվեց ազգային-կրոնական ատելությունը հայերի հանդեպ, և արհեստական առիթներ ստեղծվեցին հայ-թուրքական ընդհարումներ հրահրելու համար: Թուրքերին հաջողվեց իրենց հայաջինջ քաղաքականությունը Վասպուրականում գործողության մեջ դնել այն բանից հետո, երբ ռուսական զորքերը ժամանակավորապես հետ քաշվեցին գրավված վայրերից:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա-Դօ, 1917, Մեծ Դէպքերը Վասպուրականում, Երեւան, «Լույս» 1917, 488 էջ:

Ա-Դո (Հովհաննես Տեր- Մարտիրոսյան) 2013, Ռուսական ցարերը և Հայկական հարցը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 161 էջ:

Ակնունի Ս. 1920, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, «Հայաստան» գրատուն, 319 էջ:

Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման,1919, 350 էջ:

Բարթ Բ. 2011, Երիտթուրքերի վարչակարգը և հայերը, Վէմ, հուլիս-սեպտեմբեր, թիւ 3(35), էջ I–XVII:

Բինոն Ռ. 1919, Հայերու բնաջնջումը. Գերմանական մէթոտ. թրքական գործելակերպ, Կ.Պոլիս, տպ. Կ. Արծագանգ, 60 էջ:

Դարբինեան Ա. 1947, Հայ ազատագրական շարժման օրերէն. յուշեր 1890 էն 1940, Փարիզ, տպ. «Արաքս», 640 էջ:

Դիանա Աղաբեկ Աբգար. Կեանքը եւ գործունէութիւնը, 2011, Նոր-Ջուղա, «Լուսակն», 112 էջ:

Թերլեմեզյան Փ. 2017, Կյանքիս հուշերը, Երևան, «Թեքեյան» մշակութ. միության հրատ., 419 էջ:

Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին եվ պատերազմի տարիներին, ուսումնական առաջադրանքներ եվ մեթոդական օժանդակ նյութեր 1984, կազմեց՝ Վ.Ս. Բայբուրդյան, Երևան, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, 55 էջ:

Լէօ 1935, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ.Բ, Փարիզ, տպ. Պահրի եղբարց, 262 էջ:

Կոսոյեան Հ. 1966, Վան. Բերդաքաղաքի ժողովրդային հերոսապատումը. 1915 ապրիլի 7 - մայիսի 3, Թեհրան, տպ. «Ալիք», 176 էջ,

Կոսոյեան Հ. 1992, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 135 էջ:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 102, թ. 42:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 11:

Հուշագրական ժառանգություն. ՀՃՈ հիմնադրամի գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԴ 2011, Երևան, «Տիգրան Մեծ», 383 էջ:

Մանուկեան Հ. 1937, Դէպքերը Վասպուրականում, Վէմ. հանդէս մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, թիվ 1, յունուար-մարտ, էջ 51–63:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում 2005, աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, «Հայաստան», հ. I, 483 էջ:

Յուշեր Արմենակ Եկարեանի 1947, Գահիրէ, «Նոր աստղ» տպ., 307 էջ:

Պալաքեան ծ. վարդ. Գ. 1922, Հայ Գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեոլինէն դեպի Զոր, 1914–1920, Ա հատոր, Վիեննա, «Կաթող. Մեծ Տանն Կիլիկիոյ», 494 էջ:

Պառպի Հ. 1919, Սարսափի երկրին մէջ. նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, «Այգ», էջ 139:

Պրայս Լ. 1920, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, կազմեց Վահան Միրագենց, Կ.Պոլիս, 175 էջ:

Սաֆրաստյան Ռ. 2007, Օսմանյան կայսրության ցեղասպանության երկու ծրագիր (1876 և 1915 թթ.), ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Լուսակն», 39 էջ:

Սաֆրաստյան Ռ. 2009, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, «Լուսակն», 247 էջ:

Սոլախյան Կ. 2000, Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երևան, «Զանգակ-97», 92 էջ

Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան Հերոսամարտի տասնեւհինգամեակին առթիւ, 1915–1930, Վենետիկ-Ս.Ղազար, «Մխիթարեան» տպ., 1930, 413 էջ:

Վերջին լուր, Կ.Պոլիս, 23.03.1919, թիւ 1528:

Տատրեան Վ. 1995, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, հայկական ցեղասպանութիւնը յետ-պատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ, Բոստոն, «Պայքար», 147 էջ:

Гасанова Э.Ю. 1966, Идеология буржуазного национализма в Турции в период младотурков (1908–1914), Баку, изд-во АН Аз.ССР, 163 с.

Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии 2003, Москва, «Гардарики», т. 2, ч. 1, сост., отв. ред., автор предисловия и комментарии докт. юр. наук, проф. Ю.Г. Барсегов, 912 с.

Готлиб В.В. 1960, Тайная дипломатия во время Первой мировой войны, Москва, «Соцэкгиз», 603 с.

Залесский К.А. 2000, Первая мировая война, биографический энциклопедический словарь, Москва, «Вече», 576.

Корсун Н.Г. Комдив 1940, Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте в 1915 году, Москва, «Воениздат», 200 с.

Лудшувейт Е.Ф. 1966, Турция в годы Первой мировой войны, 1914–1918 гг., Москва, изд-во Моск. ун-та, 386 с.

Материалы Политархива МИД кайзеровской Германии, 1995, Ереван, «Гитутюн», 644 с.

Ногалес Р. 2006, Четыре года под полумесяцем, Москва, «Русский вестник», 368 с.

Оборона Вана. 7 апреля – 4 мая 1915 г., Москва, тип. «Вл. Венгерова», 1917, 48 с.

Kâzım Karabekir 1995, Cihan harbine neden girdik, Emre Yayinlari, 199 s.

К ВОПРОСУ О НАЧАЛЕ ПОГРОМОВ АРМЯН В ПРОВИНЦИЯХ ВАНСКОЙ ГУБЕРНИИ

АРУТЮНЯН А.

Резюме

Ключевые слова: движение, волонтерское движение, Ван, Джевдет, Арам, А. Врамян, резня.

Армяне Ванской губернии, обосновавшиеся на северо-восточном отрезке русско-турецко-турецко-персидской границы, являлись причиной серьезной обеспокоенности турок во время продвижения русской армии и армянских добровольческих отрядов в Ван в ноябре 1914–1915 годов. Именно поэтому депортация и массовые убийства армян Васпуракана достигли ужасающих масштабов особенно с началом боевых действий на Кавказском фронте, в частности, во второй половине ноября 1914 года, когда усилилась национально-религиозная ненависть к армянам и искусственным образом были созданы условия для провоцирования армяно-турецких столкновений.

ON THE ISSUE OF THE OUTSET OF ARMENIAN MASSACRES IN DIFFERENT PARTS OF VAN PROVINCE

HARUTYUNYAN A.

Summary

Key words: movement, volunteer movement, Van, Jevdet, Aram, A. Vramyan, massacres.

Located in the northeastern corner of the Russian-Turkish-Turkish-Persian border, the Armenians of Van province could have caused serious political and military problems for the Turks during the November 1914–1915 movement of the Russian army and Armenian volunteer detachments to Van.That is why the deportations and massacres of the Armenians of Vaspurakan gained momentum especially with the start of hostilities on the Caucasus front, and developed threatening manifestations especially in the second half of November 1914, when more and more national-religious hatred against Armenians and artificial Armenian-Turkish interactions occurred to provoke clashes.